

ԴԵՊԻ ԽԱԶԱԳՐԵԱԼ ՇԱՐԱԿՆՈՑԻ ՔՆՆԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ –
ՏՆՏԵՍԵԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ ԼՐՈՒՄԸ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ԹՆՃՈՒԿՆԵՐ
ԻԼթիճեան Հ. (Չեխիա, Մեծն Բրիտանիա, Կիպրոս)

hutidjian@yahoo.com

Բանալի բառեր՝ Շարակնոց, Տնտեսեան, խազագիտութիւն,
քննական, բաղդատական երաժշտագիտութիւն:

Ներկայ ուսումնասիրութեամբ կ'առաջադրենք նոր հետազօտական
ուղղութիւններ ներշնչուած եղիա Տնտեսեանի ժառանգութենէն,
համադրելով իր յետ-մահու հրատարակուած Շարակնոցը իր
երաժշտագիտական գրութեանց հետ: Այս ատաղծի վերլուծմամբ եւ
մեղեդիական տարբերակներու խազաւորեալ Շարակնոցներու հետ
բաղդատմամբ՝ կը փորձենք գէթ մասամբ պարզաբանել Տնտեսեանի՝
եւ իր սերունդի Պոլսեցի եկեղեցական երաժշտաց գործելակերպը, երբ
ԺԹ դարուն՝ ձայնագրութեան նպատակաւ ջանացին վերակառուցել եւ
նոյնիսկ վերստեղծել որոշ շարականաց կորուսեալ, մոռացեալ
եղանակները՝ իրենց խազերու սահմանափակ հասկացողութեան (եւ ոչ
թէ յիշողաբար պահպանուած մեղեդիներու կարծեցեալ սոսկ
վերարտադրութեան) հիման վրայ: Ըստ այնմ, հայ խազագիտութեան
մէջ յառաջդիմելու անհրաժեշտ (սակայն այսուհանդերձ անբաւարար)
նախապայման մը կը թուի մեզի (ի հեճուկս սովետահայ
երաժշտագիտութեան) պարզամտօրէն չկաշկանդուիլ որեւէ մէկ
ձայնագրեալ աւանդութեան սահմաններով, այլ բաղդատել ըստ
կարելւոյն առաւելագոյն թիւով մեղեդիական տարբերակներ, ի հարկին
նաեւ օգտագործելով դպրաց աւանդական յանկարծաբանական
մտային ճկունութիւնը, ի խնդիր օգտագործելի համակցութեանց թուի
ստուարացման: Անհրաժեշտ է նաեւ մէկէ աւելի վստահելի
խազագրեալ աղբերց զուգահեռ օգտագործումը: Արդ, կեդրոնանալով

անոնց քննական խմբագրութեան կնճռոտ թնճուկին վրայ, դարձեալ իբր սկզբնակէտ կ'առնենք Տնտեսեանի որդեգրած սկզբունքները, ներկայացնելով թէ՛ անոնց անխուսափելիօրէն խոցելի կէտերը, եւ թէ անուրանալի բարեմասնութիւնները, քննելով շարականաց տարբեր տանց եղանակաց իրար հաշտեցման հարցը, նոյն մեղեդիական ընտանիքի պատկանող այլ միաւորաց հետ համեմատմանց հարցը, եւ հասարակ աղաւաղման ու իսկական տարբերակմանց միջեւ զանազանման խնդրականութիւնը:

Հակառակ խագերու մեր ներկայ չարաչարօրէն սահմանափակեալ հասկացողութենէն առթեալ դժուարութեանց՝ ըստ մեր կարծեաց հնարաւոր է գէթ որոշ զգուշաւոր եզրակացութեանց յանգիլ, որոնք կրնան ապագայ խագագիտական աշխատանաց նպաստ մը բերել: Կ'օգտագործենք աննախընթացօրէն լայն աղբիւրներէ քաղուած մեղեդիական նմոյշներ (Տնտեսեանի, Թաշճեանի, Աբգարի, Չերչեանի (Բ.), Կոմիտասի, Տայեանի, Ազնաւորեանի, Bianchini-ի ու Petermann-ի ձայնագրութիւններէն). իսկ խագագրեալ աղբիւրներէ՝ ցարդ նկատի առնուած են կիլիկեան ու արեւելեան Հայաստանի ձեռագրաց կողքին՝ Ոսկանի, Կիւրեղեանի, Խանճեանի, Ե.դիմայ («Շարական Ձեռաց») այլազան հրատարակութիւնները: Լուսարձակի տակ կը դնենք նաեւ որոշ յարակից խնդիրներ. օր.՝ յարաբերութիւններ չափաւոր ու ծանրագոյն մեղեդիական տարբերակաց միջեւ (իսկ որոշ պարագաներու՝ ճիշդ այսպիսի յարաբերութեանց ակնբաղխ պակասը), ինչպէս նաեւ քարոզ եղանակաց ու որոշ Շարակնոցի ձայնեղանակաց միջեւ, Տնտեսեանի Շարակնոցի պակասներու ամբողջացման (գործնական կարեւորութիւն ունեցող) հարցը, եւլն:

TOWARDS A CRITICAL EDITION OF THE ARMENIAN NEUMATICALLY-NOTATED
HYMNAL: THE FULFILMENT OF TNTSEAN'S VISION AND ASSOCIATED
CONUNDRUMS

Utidjian H. (Czech Republic, Great Britain, Cyprus)